ԲՆԱԿԱՆ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՊԱՐՆԵՐԸ

Անցյալ դարի 70-ական թվականներին, ոգեշնչվելով եվրոպական կառուցվածքաբան Յակոբսոնի, նաև՝ հնչյունաբաններ Ռուսլոյի և Պասսի աշխատություններով, ամերիկացի Դեյվիդ Ստեմպը հիմնում է, ինչպես ինքն է անվանել, բնական հնչյութաբանությունը: Բնական հնչյութաբանությունն այդպես է անվանվել սերող հնչյութաբանությունից տարբերվելու համար: Հետագայում այս տեսության հիմքերն այնպես են ընդարձակվում, որ հնչյութաբանության կողքին զարգանում են նաև բնական ձևաբանությունն ու բնական շարահյուսությունը: Այսօր արդեն կարելի է հաստատել բնական լեզվաբանության գոյությունը, չնայած այն դեռ քիչ ճանաչում ունի իր ստեղծման դաշտից դուրս, որը հիմնականում ամերիկյան է, ավստրիական և գերմանական:

Ի՞նչ է իրենից ներկայացնում բնականությունն հասկացությունը: Նախ՝ բնականությունը հակադրվում է արհեստականությանը, ինչպիսին արհեստական լեզուներինն է: Բնական տեսության մեջ այն տեսական կարգավիճակ ունի, կազմում է բնական տեսության յուրահատկությունը: Բնականությունը լեզվի մի ըմբռնում է, որի հիմքում ընկած են լեզվի հաղորդակցական ու ճանաչողական գործառույթները, ինչպես նաև նրա արտալեզվական հիմքերը: Լեզուն դիտվում է իբրև հաղորդակցությամբ և ճանաչողությամբ առաջադրված խնդիրների լուծման համակարգ:

Կառուցվելով այս հիմքերի վրա՝ բնական տեսությունը պահանջում է իր առաջադրած վարկածների, տեսակետների փորձային ստուգում, ձգտում իր հասկացությունների և կառույցների հոգեբանական հավաստիությանը: Այսինքն՝ բնական տեսությունը չի սահմանափակվում պարզ նկարագրությամբ, այլ պարտավորվում է նաև հիմնավորել երևույթը:

Ըստ Դոնգանի և Ստեմպի՝ բնական տեսությունը լեզուն ներկայացնում է իբրև «իր գործածողների կարիքների, ունակությունների և աշխարհի բնական մի արտացոլում, քան կատարելապես պայմանական մի գոյացություն: Սա բնական մի տեսություն է նաև այն իմաստով, որ ցանկանում է բացատրել իր խնդիրը, ցույց տալ, որ *այն բնականորեն բխում է իրերի էությունից*»[1]:

Լեզվի ուսումնասիրությունն իր հաղորդակցական համատեքստում, ինչպես նաև արտաքին պայմանների հաշվառումն, անշուշտ, նորամուծություն չէ: Սակայն բնական տեսությունը տալիս է առարկայի սահմանման ավելի լայն

[1] Տե՛ս Kilani-Scoch M., «Introduction à la morphologie naturelle», Berne 1988, p. 29:

հնարավորություն: Այն ընդունում է տեսության մեջ գործառույթի հասկացությունը, ընդհանրությունների դերն ու «նյութական հիմք»-ին հատկացնում մեծ կարևորություն՝ այսպիսով տարբերվելով թե դասական կառուցվածքային-գործառական տեսություններից, և թե սերման տեսությունից:

Մարտինեն, օրինակ, կողմ է առարկայի ավելի նեղ ընկալմանը, որտեղ լեզվական կառույցի ճշգրիտ սահմանները չպետք է խախտվեն: Մարտինեն, ի տարբերություն բնական տեսության, իբրև գործառույթ նկատի ունի միայն հաղորդակցական գործառույթը, որ սակայն շատ հստակորեն չի տարբերում հաղորդակցական դիտավորության ընդհանուր հասկացությունից: Նաև՝ նա մերժում է «նյութական հիմք»-ի կարևորությունը լեզվական դաշտից դուրս:

Իսկ սերման տեսությունը վերաբերում է ձևային հարացույցին: Ըստ այս տեսության մարդկային լեզվի էությունը համընդհանուր բնածին մի քերականություն է՝ բնութագրելի ձևային սկզբունքներով և կանոններով: Այստեղ լեզվի, այսինքն՝ քերականության ուսումնասիրությունը գործիքի ուսումնասիրությունն է իր գործառություններից և կիրարկություններից անկախ: Խոմսկու բնածինությանը հակադրվում է Սեյլերի առաջարկած դինամիկ և կառուցողական հեռանկարը : Նրա կարծիքով մենք մեր գիտակցության մեջ համընդհանուր լեզու չունենք. լեզուն *կառուցման* գործընթաց է:

Այստեղ կսահմանափակվենք բնական ուղղության երեք խոշոր լեզվաբանների՝ Վոլֆգանգ Դրեսլերի, Վիլլի Մայերթալերի, Վոլֆգանգ Վուրցելի բնական ձևաբանական կաղապարների քննարկմամբ:

Բնական ձևաբանությունը զարգացել է համեմատաբար ավելի ուշ՝ 1980-ականների սկզբին, Գերմանիայում և Ավստրիայում: Բնական ձևաբանության հետազոտությունների դաշտը սահմանափակ չէ: Այն առաջադրում է նոր մոտեցում ավանդական ձևաբանությանը՝ արտահայտելով լեզվի կառուցվածքային միտումները:

Ձևաբանությունն իրենից ներկայացնում է բառային մակարդակում հարաբերություններ կառուցելու միջոցների ամբողջություն: Միաժամանակ այն նաև կոդավորման եղանակ է, այսինքն՝ հնչյունի, որպես խոսքի արտաբերվող տարրի, և նշանակության զուգակցման եղանակ: Բառը հանդես է գալիս իբրև ձևաբանության կենտրոնական հասկացություն: Կարո՞ղ է արդյոք ձևաբանական բառն ունենալ համընդհանուր բնորոշում: Ըստ Վուրցելի՝ ձևաբանական բառը քերականական միավոր է, որ չի կարող ընդհատվել բառային միավորով և որի բաղադրիչները չեն կարող առանձին թեքվել: Այդուհանդերձ ֆրանսերենի որոշ սակավաթիվ բարդություններ խախտում են երկրորդ սկզբունքը: Օրինակ՝ եզ.թ. bonhomme, հոգն. թ. bonshommes, եզ.թ. madame, հոգն.թ. mesdames, եզ.թ. monsieur, հոգն.թ. messieurs: Թերևս յուրաքանչյուր լեզու պահանջում է

առանձին մոտեցում: Ձևաբանական բառը նախ պետք է տարբերել հնչույթաբանական բառից. օրինակ՝ ֆրանսերենում հնչույթաբանական բառը կարող է պարունակել ձևաբանական մեկ բառ՝ ավելացրած հարող մեկ կամ մի քանի բառեր՝ les amis - ընկերները, il se lave-նա լվացվում է...

Բնական ձևաբանության մեկնակետում տիպաբանական աշխատանքներում կատարված լեզվական ընդհանրացումներն են: Շնորհիվ այդ ուսումնասիրությունների (օրինակ՝ Գրինբերգի ընդհանրությունները) պարզ դարձավ, որ ձևաբանական համակարգերն ու նրանց միջև եղած տարբերություններն աշխարհի լեզուներում ամբողջությամբ անկազմակերպ չեն և նշանակալից կանոնավորություն են ներկայացնում: Օգտագործվող միջոցներից կարող ենք նշել, օրինակ, ածանցման գերակշռությունը, բառային ձևույթների համեմատությամբ քերականական ձևույթների սեղմությունը, թեքման եզրային դիրքը, հոգնակի թվի արտահայտման ընդհանրությունը ձևային նշույթով, և այլն: Ինչ վերաբերում է քերականական կարգերին, այստեղ նույնպես դիտարկվում են մեծաքանակ նմանություններ (հոլով, սեռ, դեմք, թիվ և այլն): Ձևաիմաստային կարգերի բաժանման կանոնավոր միտումներ են նկատվում թեքական և ածանցային ձևաբանություններում: Բավական հետաքրքիր են Ջ. Բայբիի դիտարկումները. միջլեզվական հետազոտությունների արդյունքում նա հանգել է այն եզրակացության, որ բառակազմական ձևույթներն արմատի հետ ավելի սերտ են կապակցվում, քան թեքականները, և որ պետք է ակնկալել արմատի հետ ավելի սերտ և արմատից ավելի մեծ հեռավորության վրա գտնվող կարգեր: Գոյականի համար, օրինակ, թվի կարգն ավելի սերտ է հիմքին, քանի որ այն ավելի համապատասխան է նրա իմաստին: Հոլովն, ընդհակառակը, փոփոխում է միավորների միջև հարաբերությունները: Ուսումնասիրելով կերպը, ժամանակը, եղանակը և դեմքը՝ Բայբին հանգում է նրանց ստորակարգային դասավորության եզրակացությանը :

Առհասարակ ցանկացած ձևաբանություն, ելնելով «բառափոխության» և «բառակազմության» եղանակներից[2] , բաժանվում է երկու մասի՝

ա) թեքական ձևաբանություն, որի խնդիրը թվի, սեռի, ժամանակի, դեմքի և այլ կարգերի ուսումնասիրությունն է,

բ) բառակազմական ձևաբանություն, որի խնդիրը բառերի կազմության ուսումնասիրությունն է:

Հարկ է նշել, որ բնական ուղղության կողմնակիցներն այս հարցին ցուցաբերում են նոր մոտեցում՝ պնդելով, թե հնարավոր չէ ճշգրիտ սահմանազատում նրանց միջև, ուստի և ձևաբանությունը պետք է դիտվի իր ամբողջության մեջ:

---

[2] Տես Աբեղյան Մ., «Հայոց լեզվի տեսություն», Երևան 1965թ., էջ 6-8:

Թեքումն ու ածանցումը համարվում են իբրև ձևաբանական սանդղակի երկու հակադիր բևեռներ: Վ. Վուրցելը, օրինակ, պնդում է, որ նրանց միջև գոյություն ունի անցումային, միջանկյալ մի գոտի: Ջ. Բայբին իր տիպաբանական ուսումնասիրությունների արդյունքում հանգում է այն եզրակացության, որ անցումը թեքական ձևաբանությունից բառակազմականի աստիճանական է:

Բնական տեսությունն, ինչպես նշեցինք, սերտորեն կապված է գործառական հարացույցի հետ: Այն լեզուն դիտարկում է իբրև ճանաչողության / հաղորդակցության գործիք: Վ. Դրեսլերի բնական կաղապարը գործառական է, նշանաբանական, ուստի և համընդհանուր: Նրա դիրքորոշումը սերտորեն կապված է գործառական լեզվաբանության հետ, և Դրեսլերն էլ տեսականորեն փորձում է արդարացնել իր մոտեցումը: Նրա առաջարկած բնականության համակարգը ստորակարգային է, բաժանվում է լեզվական և ոչ-լեզվական մակարդակների: Դրեսլերը բնական ձևաբանությունը համարում է *նախապատվության* (preference) տեսություն: Նախապատվություններն, ըստ Դրեսլերի, վերաբերում են ոչ-լեզվական մակարդակին: Այսպիսով, « «բնականությունը» կանգնած է համակարգի ոչ-լեզվական մակարդակի գագաթին՝ իբրև բարձրագույն սկզբունք..., մինչդեռ ավել / պակաս բնականը պահպանվում է բնական լեզուների մակարդակի համար»[3]:

Դրեսլերի կաղապարը կառուցվում է հետևյալ կանխադրույթների հիման վրա.

1) լեզուն հաղորդակցության և ճանաչողության միջոց է. այս կանխադրույթի հետ կապված են լեզվի երկու հիմնական՝ հաղորդակցական և իմացական գործառույթները,
2) լեզուն հասարակական կազմավորում է, որոշակի դեր է կատարում հասարակության մեջ,
3) լեզվի բաղադրիչները փոխազդում են, ինչի արդյունքում առաջացած տարածայնությունները գործառական բացատրության կարիք ունեն :

Լեզվի գործառական և նշանաբանական մոտեցումը զարգացվել և հիմնավորվել է հատկապես Դրեսլերի աշխատություններում: Նա մերժում է բնականության հասկացության անորոշ կիրարկությունն ու իր առաջադրած կանխադրույթների կենտրոնում դնում հաղորդակցական գործառույթը:

Լեզվի կառուցվածքը պետք է դիտվի իր երկու գլխավոր գործառույթների նկատմամբ, որոնց դերը ճանաչողությանն ու հաղորդակցությանը ծառայելն է: Ճանաչողությունն ու հաղորդակցությունը նշանակում են մի շարք խնդիրներ, առաջադրանքներ, որ պետք է լուծվեն լեզվական գործողությունների միջոցով:

---

[3] Sti'u Kilani-Scoch M.,«Naturalness or preference»,Torino:Rosenberg & Sellier, pp 233-240

Դրեսլերի բնական կաղապարի կառուցվածքի հետ նախ և առաջ սերտորեն կապված են ընդհանրությունները: Դրանք ծառայում են լեզվի հաղորդակցական և ճանաչողական գործառույթներին: Ընդհանրությունների գործառույթները գնահատելու համար պետք է գտնել դրանց արտալեզվական հիմքերը, դիտել ընդհանրություններն իրացման մեջ: Իսկ այստեղ արդեն միջամտում է նշանաբանությունը՝ տալով համեմատության տեսական հիմքը: Փաստորեն մեթոդաբանորեն կապակցվում են համընդհանրությունը, գործառականությունը և նշանաբանությունը:

Խոսքային միջոցների գնահատման համար, ըստ Դրեսլերի, պետք է դրանք համեմատության մեջ դնել ոչ խոսքային միջոցների հետ: Այս նպատակով նա դիմում է նշանագիտությանը, ավելի ստույգ՝ Չարլզ Պիրսի նշանագիտությանը: Ամերիկացի այս մեծ փիլիսոփան համարվում է ժամանակակից նշանագիտության հայրը, մեծ նորարար է հետազոտությունների մեթոդաբանության և գիտությունների փիլիսոփայության բնագավառներում, և այսօր նրա հայացքները լայնորեն կիրառվում են գիտության այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են աստղագիտությունը, տեղագրագիտությունը, մաթեմատիկան, գիտությունների տեսությունն ու պատմությունը, լեզվաբանությունը, հոգեբանությունը և այլն: Պիրսի նշանագիտությունը տալիս է նշանների բնորոշման և դրանց արդյունավետության գնահատման չափանիշների մի ամբողջություն: Լեզվական բնականության կառուցման համար այդ սկզբունքները մեկնակետ են հանդիսանում: Լեզվաբանության մեջ համընդհանուր տարածում գտած Սոսյուրի նշանի հասկացության համեմատությամբ Պիրսի նշանի հասկացությունն ավելի բարդ է: Նախ՝ Պիրսի նշանագիտությունը տարբերվում է Սոսյուրի նշանաբանությունից այն բանով, որ այնտեղ լեզուն արտոնյալ տեղ չի զբաղեցնում, և երևույթն ավելի լայն և բազմակողմանի դիտարկման է ենթարկվում: Նախ՝ Սոսյուրի մոտ նշանը դուալիստական հասկացություն է, նշանակչի և նշանակյալի միասնություն, իսկ Պիրսը տալիս է նշանի եռակազմ կառուցվածք (հարկ է նշել, որ բնական տեսության հիմքում մարդու կողմից աշխարհի եռաչափ ընկալման ունակությունն է)՝

-representamen կամ նյութական նշան

-առարկա կամ վերաբերյալ

-մեկնաբանող նշան կամ նշանի դաշտ (նշանը ուղղվում է մեկին, և այդ անձի գիտակցության մեջ նա ստեղծում է համարժեք մի նշան, որը և կոչվում է առաջին նշանի մեկնաբա նող). սրան ծուլվում է representamen-ը՝ հղում կատարելու համար առարկային:

Պիրսի նշանները կազմում են շարունակական շղթաներ. անվանելու համար մի նշանի մեկնաբանողը պետք է դիմել մեկ այլ մեկնաբանողի, որն էլ իր հերթին

անվանվում է մեկ այլ նշանի միջոցով, և այսպես շարունակ: Նրա նշանի տեսությունը եռանդամահատում է խորհրդանշանների, հատկանիշների և պատկերանշանների: Այսպիսով, առաջադրվում են նշանի քանակական երկու անդամները՝ ձևը և բովանդակությունը (signans և signatum), և այն հարաբերությունը, որը միավորում է նրանց և որակվում որպես խորհրդանշանային:

Դրեսլերի բնական կաղապարի մեթոդաբանության մեջ հատկապես կարևոր է այն փաստը, որ ներգրավվում է տիպաբանությունը: Տիպաբանությունը զբաղվում է տարբեր լեզուների միջև նմանությունների և տարբերությունների ուսումնասիրությամբ, ձգտում ցույց տալ, որ լեզուների միջև տարբերությունները քաոսային չեն, այլ ենթարկվում են որոշակի սկզբունքների, որոնք պետք է բացահայտել: Իսկ բնական տեսությունը փորձում է լեզուների հատկությունների միջև կախվածություններում բացահայտել այդ զուգահեռականությունը: Դրեսլերն իր բնական կաղապարում զուգակցում է համընդհանուր և տիպաբանական հետազոտությունները:

Բնական կաղապարի մասին լիարժեք պատկերացում տալու համար Դրեսլերը ներմուծում է նաև զտիչի հասկացությունը: Այն կրճատում է տարբեր մակարդակների սահմանները:

Տիպը գործում է իբրև լեզվական ընդհանրությունների առաջին զտիչ: Տիպն, իհարկե, իդեալական հասկացություն է, և բնական տեսության խնդիրը կայանում է բնականությանը համապատասխան բացատրել այն:

Երկրորդ զտիչը պայմանավորված է առանձին մի լեզվի համակարգային մակարդակով, այսինքն՝ այդ համակարգի առանձնահատուկ և որոշիչ հատկություններով :

Երրորդ զտիչը լեզվի՝ իբրև հասարակական հաստատության ներհատուկ նորմաների զտիչն է:

Իսկ *չորրորդը* լեզվի նորմաների իրագործման զտիչն է անհատական իրականացմամբ, որով զբաղվում է հոգելեզվաբանությունը:

Այսպիսով, իրացումը հիմնվում է նորմաների վրա, նորմաները՝ լեզվական իրազեկության, լեզվական իրազեկությունը՝ տիպի, և տիպը՝ ընդհանրության: Իսկ ընդհանրություններն, ըստ Դրեսլերի, հիմնված են իրացման անհրաժեշտության վրա, ինչն էլ փաստորեն վերաբերում է արտալեզվական հիմքին:

Դրեսլերի բնական ձևաբանական կաղապարը յուրահատուկ և լիարժեք կաղապար է: Նրանով նախ ներկայացվում և հիմնավորվում է բնական ձևաբանության տեսությունը, բացի այդ, տարվում են նաև փորձառական ուսումնասիրություններ: Բնական ձևաբանության նրա տեսությունը համընդհանուր է, և ընդհանրություններն էլ ծառայում են հաղորդակցությանը, ճանաչողությանը,

հիմնված են արտալեզվական բազայի վրա: Ձևաբանական ընդհանրությը Դրեսլերի մոտեցման մեջ հետևյալ ձևակերպումն է ստանում.

ա) այն ունի լեզվական գործառույթ

բ) ունի իրացման գործառույթ

գ) իրացման գործառույթը գնահատվում է նրա նշանաբանական հիմքով

դ) փորձային ճանապարհով ստուգվում են նրա արտալեզվական հիմքերը:

Բնականության ընդհանրությները Դրեսլերը ներկայացնում է չափորոշիչներով՝ դասավորելով դրանք սանդղակի տեսքով՝ ավելի բնականից դեպի պակաս բնականը:

ա) Բնականության առաջին չափորոշիչը բխում է նշանաբանությունից և կազմում է տրամագրային (դիագրամային) սանդղակ: Ձևաբանության համար հատկապես մեծ կարևորություն է ներկայացնում կառուցողական տրամագրությունը: Բերենք մեկ օրինակ հայերենից և դիտարկենք այն ձևաբանական և իմաստաբանական պլաններում: *Երգիչ* բառում *-իչ* ածանցը հիմքին հաղորդում է գործող անձի նշանակություն, ուստի և բառի իմաստային կառույցը կարելի է ներկայացնել A+B բանաձևով: Ձևաբանական պլանում նույնպես գործ ունենք հավելման հետ, որը ներկայացվում է a+b բանաձևով՝ հիմք+ածանց: Ձևիմաստային և ձևաշարադասային կառույցների միջև համաբանությունը ներկայացվում է հետևյալ կերպ՝ a+b, որտեղ A-ն խորհրդանշվում է a-ով և ներկայանում

$\overline{A+B}$

երգ հիմքով, իսկ B-ն՝ b-ով և *-իչ* ածանցով:

բ) Երկրորդ չափորոշիչը վերաբերում է ձևաշարադասային հստակությանը: Սա իր հերթին բխում է նշանաբանական հստակության սկզբունքից. ձևաշարադասորեն հստակ նշաններն ավելի հեշտ են ստեղծվում և ընկալվում, քան մթագնածները, այսինքն՝ նրանց ձևաբանական հիմքերն ավելի հեշտ են որոշվում, ձևաբանական գործողություններն ավելի հեշտ կառավարելի են: Օրինակ, ֆրանսերեն la lierre- բաղեղ բառի մեջ այլևս չի գիտակցվում գոյականի հետ հոդի միաձուլման փաստը. լատ. hedera-բաղեղ բառից հին ֆրանսերենում առաջացել է l'hierre ձևը, իսկ հետագայում տեղի է ունեցել բառի հետ հոդի միաձուլում:

Այս չափորոշչի բնականության աստիճանները հիմնվում են հիմքի և ածանցի միջև ձևաբանական սահմանների վրա. որքան թույլ է հստակությունը, այնքան դժվար է ընկալվում հատույթավորումը:

գ) Երրորդ չափորոշիչը՝ ձևիմաստային հստակությունը, ծառայում է իմաստային պատճառաբանվածության ձևային գործառույթին: Այս սանդղակն ունի երկու բևեռ: Մեկը, որ ամենաբնականն է, այն սկզբունքն է, որ միավորի

նշանակությունը պայմանավորված է մասերի նշանակությամբ: Իսկ մյուս ծայրում բարդ բառերի բառայնացումն է, ինչը տանում է իմաստային մթագնման: Այսօր հայոց լեզվի կրողներն այլևս չեն գիտակցում, որ *բամբասել* բառը կազմված է *բալ- ասել, խոսել* բայի ներկա ժամանակի եզակի թվի առաջին և երկրորդ դեմքերի ձևերից են՝ բամ-ասեմ, բաս-ասես:

դ) Չորրորդ՝ փոխադարձ միարժեքության չափորոշիչը Դրեսլերի աշխատություններում դիտվում է իբրև իմաստային հստակության հետևանք: Սա *նշանակչի և նշանակյալի միջև* անփոփոխական հարաբերությունների տեսակ է: Ճանաչողության և հաղորդակցության պլանում փոխադարձաբար միարժեք նշաններն առավելություններ ունեն:

ե) Վերջին չափորոշիչը վերաբերում է ցուցչայնությանը, որը շատ ընդհանուր հասկացություն է: Թե՛ թեքական, և թե բառակազմական ձևաբանությունները կարող են դիտվել իբրև ցուցչային, քանի որ ածանցները հիմքերի վերջավորություններն են:

Բնականության սանդղակի չափորոշիչները փոխադարձաբար լրացնում են միմյանց: Այդուհանդերձ որոշ չափորոշիչներ կարող են հակասության մեջ մտնել միմյանց հետ, ինչպես օրինակ՝ տրամագրայինն ու ցուցչայինը: Այսպես, տրամագրությունը ածանցների քանակի սահմանափակում չի մտցնում և կարող է հանգեցնել շատ երկար բառածների (այնինչ ընկալման և մտապահման հնարավորությունները սահմանափակ են): Սա ինքնին հակասում է ցուցչայնությանը, քանի որ վերջինս ենթադրում է ձևույթի և հիմքի հնարավորինս մոտիկություն:

XXդ. տարբեր տիպաբանական կաղապարներից (Մաթեզիուս, Սեպիր, Գրինբերգ և այլն) Դրեսլերի կաղապարին ամենամոտը Սկալիչկայի կաղապարն է: Այն առանձնանում է հատկապես լեզվական տիպերի սեղմ քանակով (5՝ ի տարբերություն Գրինբերգի առաջարկած 24 տիպերի), ինչպես նաև հնչույթաբանական, ձևաբանական, բառային և շարահյուսական բաղադրիչների հաշվառումով:

Բնական ձևաբանության մեջ առանձնահատուկ ներդրում է կատարել նաև Վ. Մայերթալերը՝ նշույթի տեսության միջոցով փորձելով կաղապարել լեզվական ընդհանրույթները: Նշույթն աստիճանական բնույթ ունի և տեսության մեջ դիտվում է իբրև համեմատական հարաբերությունների ամբողջություն: Մայերթալերը համարժեքություն է հաստատում նշույթի և բնականության միջև. որքան շատ է նշույթավորված ձևաբանական երևույթը, այնքան ավելի քիչ բնական է այն, և որքան քիչ է նշույթավորված, այնքան ավելի է բնական:

Երևույթի հարաբերական նշույթը բնորոշելու համար նա նշում է երկու աղբյուր՝ արտաքին և ներքին:

Մեթոդաբանական առումով Մայերթալերն առաջնություն է տալիս իմաստային նշույթի հարաբերություններին: Նշույթի ձևաբանական տեսության առարկան իմաստային կարգերի կոդավորումը կամ խորհրդանշայնացումն է: Իսկ իմաստային կարգի խորհրդանշայնացումը բնորոշվում է երեք հիմնական սկզբունքներով՝ կառուցողական պատկերանշանություն, միատեսակություն և հստակություն: Այս հայեցակետը համապատասխանում է Դրեսլերի տեսության մեջ ձևաբանական համընդհանուր բնականությունը չափորոշիչների սանդղակի ձևով ներկայացնելուն:

Պատկերանշանությունը Մայերթալերի նշույթի ձևաբանական կաղապարի առաջին պլանում է, քանի որ պատկերանշանները մշտակա են լեզվում: Մայերթալերին է պատկանում կառուցողական պատկերանշանության սանդղակի սահմանումը: Նա տարբերում է առավելագույն, պակաս առավելագույն, նվազագույն պատկերանշանություն, ոչ պատկերանշայնություն և հակապատկերանշայնություն: Առավելագույն պատկերանշանության օրինակ է հավելման դեպքը՝ անգլ. boy- boys, ֆր. court-plus court- le plus court, պակաս պատկերանշանային է հավելման և լրացուցիչ փոփոխման դեպքը՝ անգլ. goose-geese : Ոչ պատկերանշանային է ֆրանսերենի maison-maisons ձևը՝ առանց հոդի հաշվառման: Հակապատկերանշանության ժամանակ տեղի է ունենում հատույթի նվազում՝ cheval-chevaux:

Կառուցողական պատկերանշանության սկզբունքը փորձում է բացատրել, թե հիմնական կարգերը ինչու են զրո կոդավորում ունենում: Միատեսակ կոդավորման համար Մայերթալերը հղում է կատարում հետևյալ հայտնի բանաձևին՝ «մեկ գործառույթ, մեկ ձև»: Թերևս այս երկու սկզբունքները համապատասխանում են Դրեսլերի փոխադարձ միարժեքության սկզբունքին:

Մայերթալերի կաղապարը վերաբերում է ձևաբանական բնականության համընդհանուր պլանին: Այս մակարդակում բնականությունը բացատրում է լեզվակրի շատ ընդհանուր նախընտրությունները ձևաբանական երևույթների վերաբերյալ առանձին համակարգերից անջատ, և չի ընդգրկում լեզվական փոփոխության բոլոր կողմերը: Մայերթալերն ընդունում է, որ որոշ դեպքերում ձևաբանական ընդհանրությունն ի վիճակի չէ տարբերել ձևաբանական երկու երևույթ, որոնք այդուհանդերձ համարժեք չեն թվում խոսողին՝ մեկը լինելով ավելի «նորմալ», քան մյուսը:

Այսինքն՝ լեզվական փոփոխությունները միայն կառուցողական պատկերանշանության, միատեսակության և իմաստային հստակության չափանիշներով բացատրվել չեն կարող: Օր.՝ անգլերենում առկա են հոգնակի թվի կազմության

դեպքեր -en և - s ածանցներով, և ոչինչ թույլ չի տալիս արդարացնել մեկի ընդհանրացումը մյուսի հաշվին:

Հնարավոր չէ բացատրել նաև, թե ինչու ոչ բնական ձևաբանական կանոնները չեն վերանում ձևաբանական փոխակերպումների արդյունքում և չի հաստատվում այն, ինչն ավելի բնական է: Փաստորեն բնականության տեսության լիարժեքության համար անհրաժեշտ է նաև առանձին կառուցվածքային համակարգերին վերաբերող ձևաբանական նորմայի մի տեսություն:

Համակարգից կախված այս բնականությունը ձևակերպում է Վուրցելը: Վուրցելի մեկնակետը տարբերվում է Մայերթալերից: Նա փորձում է ցույց տալ, որ անհրաժեշտ է ընդարձակել բնական ձևաբանության ընկալումը, և առաջարկում է համակարգից անկախ բնականության տեսությանն ավելացնել համակարգից կախված բնականության տեսություն: Ըստ նրա, բնորոշելու համար լեզվական փոփոխությունները, պետք է առաջնությունը տալ համակարգից կախված բնականությանը: Նրա կաղապարում հարացույցն այլևս չի դիտվում իբրև ձևերի խառնակույտ, այլ որոշակի կարգաբերված իրողություն:

Լեզվակիրն, ինչպես Վուրցելն է գրում, միշտ նախընտրում է առավել «նորմալ» ձևաբանական դասերը: Իսկ «նորմալը» տարբերելու համար լեզվակիրը լեզվական փորձի միջոցով ձեռք է բերում գիտելիքներ, ճանաչում տվյալ լեզվում առկա կառուցվածքային հատկություններն ու մյուս լեզուներից նրա տարբերակիչ հատկությունները:

Վուրցելի բնական կաղապարի երկու հիմնական սկզբունքներն են՝

- համակարգի հետ համապատասխանության սկզբունքը
- դասի կայունության սկզբունքը:

Սրանք համարվում են բնականության ամենահզոր սկզբունքները և օգնում են բնորոշելու լեզուների թեքական համակարգերի կառուցվածքն ու զարգացումը: Համակարգից կախված բնականը միշտ գերիշխում է համակարգից անկախ բնականությանը:

Համապատասխանությունը համակարգին նշանակում է համապատասխանություն նրա որոշիչ կառուցվածքային հատկություններին: Այն նպաստավոր է թեքական համակարգերի համար, որոնք կառուցվում են միատեսակ և կանոնավոր ձևով՝ մի քանի հիմնական հատկությունների հիման վրա:

Վուրցելի կաղապարը անհրաժեշտաբար ենթադրում է լեզվի թեքական ձևերի վերլուծություն: Վերլուծության ժամանակ նախ հաստատվում են թեքական համակարգերի կառուցվածքային հատկությունները, այնուհետև դրա նկատմամբ չափվում է այս կամ այն ձևաբանական երևույթը և գնահատվում համապատասխանության աստիճանը: Ոչ միատեսակ, այսինքն՝ բազում դասեր ունեցող թեքական համակարգի կառուցվածքային հատկությունները որոշելիս

կատարվում է այդ գծերի քանակական բաժանում: Այդ հատկությունների ազդեցությունը համակարգի վրա կայունացնող է. նրանք ձգտում են նվազեցնել ոչ համապատասխանն ու տանել համակարգը միատեսականացման, կանոնավորման ուղղությամբ: Օրինակ կարող է ծառայել ֆրանսերենի և գերմաներենի խոսակցական լեզվում անցյալ կատարյալ պարզ ժամանակաձևի գործածության բացառումը:

Սակայն Վուրցելի կաղապարը համակարգի միասնության բնութագրման համար հիմնվում է միայն քանակական չափորոշչի վրա, այնինչ պետք է հաշվի առնել, որ պակաս կարևոր չէ այնտեղ լեզվական տիպի խաղացած դերը: Այս կամ այն ձևաբանական երևույթը կարող է չհամապատասխանել տվյալ լեզվական համակարգի որոշիչ հատկություններին, սակայն կարող է լինել խիստ կենսունակ՝ պայմանավորված լեզվական տիպի հարկադրմամբ: Կառուցվածքային նոր հատկությունների ստեղծման հարցում, պետք է նշել, ձևաբանությունը պահպանողական է և բավարարվում է միայն եղածը վերարտադրելով: Կառուցվածքային փոփոխությունների հիմքում ավելի շատ հնչույթաբանական երևույթներ են: Ձևաբանությունն ուղղակի պատասխանատու է այդ փոփոխությունների տարածման, համակարգում դրանց բաշխման համար: Օրինակ, եթե հին ֆրանսերենում հոգնակի թիվը տարբերվում էր եզակի թվից, ապա արդեն միջին ֆրանսերենում հնչույթաբանորեն այդ /s/-ը վերանում է, և երևույթն էլ աստիճանաբար ընդունվում է խոսողների կողմից:

Վուրցելը առաջ է քաշում նաև հարացույցային կառուցվածքի պայման հասկացությունը: Հարացույցերը, որոնք կիսում են հարացույցային կառուցվածքի պայմանները, կազմում են միատեսակ թեքական դասեր: Փաստորեն այս պայմանը սահմանում է հարացույցի թեքական ձևերի և հիմքերի միջև ներակա բաղկացուցիչ հարաբերությունները: Պետք է տարբերել թեքական հարացույց և թեքական դաս հասկացությունները: Թեքական հարացույցը ներառում է մի բառի թեքական ձևերը, այսինքն՝ հիմնական ձև և ածանցված ձևեր: Իսկ թեքական դասն ավելի մեծ չափեր ունի և ներառում է բառախմբերից ածանցված ձևերի ամբողջությունը:

Վուրցելի առաջադրած կայունության սկզբունքը վերաբերում է այն թեքական համակարգերին, որոնք հետևում են շատ ընդհանուր բնույթի ներակայման կառուցվածքի: Կայուն դասն աճում է նորաբանությունների, լրացուցիչ դասերի միավորների կլանման հաշվին: Վուրցելը բերում է գերմաներենի հոգնակի թվի օրինակը n-ով, որը ձգտում է անցնել s-ով կազմվող դասի մեջ՝ Viola-s Viol-en ձևի փոխարեն: Կարելի է նշել նաև ժողովրդական լատիներենում գործած զանազան միտումներ, ինչպես օրինակ՝ դասական լատիներենի հոմանիշ ձևերից ձևաբանորեն ավելի կանոնավորներն ընտրելը, կամ էլ ամենաշատ

տարածված և կայուն առաջին խմբի բայերի հիման վրա նորաբանությունների կազմությունը:

Կայունության հասկացությունը ցույց է տալիս, որ ձևաբանական փոփոխությունների վերլուծության մեջ հարացույցային կառուցվածքի պայմաններն առաջնային դեր ունեն: Դրանք տալիս են հնարավորություն՝ կանխատեսելու դասի փոփոխությունների ուղղությունը թեքական համակարգում: Դիտվում է որակապես ամենակարևոր թեքական դասերի ընդլայնում անկայուն թեքական դասերի հաշվին: Սա տալիս է հնարավորություն՝ խուսափելու համակարգը տարբեր թեքական դասերի բաժանելուց: Օրինակ՝ ֆրանսերենի դինամիկ ձևաբանության առաջին մակրոդասը ներառում է անորոշ դերբայի –er /e/ վերջավորություն ունեցող բայերը, և հաճախ դիտվում է անկայուն դասերի բայերի անցնում կայունի մեջ՝ solutionner՝ ռsoudre բայի փոխարեն, ռmotionner՝ ռmouvoir-ի փոխարեն և այլն:

Առավել բնականության կարելի է հասնել, երբ համակարգում միայն կայուն թեքական դասեր են: Սակայն լեզուն կենդանի համակարգ է և ենթարկվում է համակարգերին բնորոշ խաթարումներին: Համակարգն ունի ինքնակարգավորման հատկություն: Խաթարված հավասարակշռությամբ համակարգը ձգտում է իր ներքին ուժերի օգնությամբ հասնել կայունության՝ վերակառուցելով դրանք և ձեռք բերելով նոր չափանիշներ: Լեզուն իբրև համակարգ միշտ ձգտում է հավասարակշռության, բայց և միաժամանակ յուրաքանչյուր լեզվական կառույց իր մեջ ունի հավասարակշռությունը քայքայելու մեծ կամ փոքր նախապայմաններ: Հավասարակշռության խախտումը միաժամանակ կարծես պայմաններ է ստեղծում նոր հավասարակշռության հաստատման համար: Կայունության ձգտող համակարգն ընտրություն է կատարում միջոցների միջև՝ մերժելով որոշ վիճակներ և ընդունելով որոշները: Սա *բնական ընտրաստման* (selection naturelle) օրինակ է: Ըստ Ռ. Էշբիի, հավասարակշռության խախտումից հետո համակարգը չի վերադառնում իր նախկին վիճակին, այլ հաստատում է նոր, ավելի ամուր և խախտումներին դիմակայելու ունակ վիճակ.

Արտաքին	Ներքին	Հարմարվողական[4]
⟶	⟶	
Ազդեցություն	Հարկադրանք	Ինքնակազմակերպում

Ձևաբանական ու հնչույթաբանական համակարգերի փոխհարաբերություններում առկա է հետևյալ հակասությունը. հնչույթաբանական գործընթացներն

[4]Laszlo E., «Introduction to systems philosophy (toward a new paradigm of contemporary thought)», New York 1972, p.43

անդադար ստեղծում են նոր անկայուն դասեր, մինչդեռ ձևաբանությունը չի հասցնում քայքայել հները: Այսինքն՝ համակարգի ձգտումը կատարելության խոչընդոտվում և միաժամանակ համակշռվում է նոր անկատարությունների ստեղծմամբ: Դա ապահովում է համակարգի կենսունակությունն ու զարգացումը: Հակառակ դեպքում կատարյալ համակարգն ինքն իրեն կքայքայեր ներսից և կդադարեր գոյություն ունենալ: Այս օրինաչափությունները հիմնվում են հակասությունների միասնության մասին Հեգելի դիալեկտիկական ուսմունքի վրա:

Վուրցելի տեսության մեծագույն հայեցակերպերից է նաև կենսունակության հասկացությունը: Թեքական դասի կենսունակության աստիճանը կախված է միաժամանակ կայունությունից և համակարգին նրա համապատասխանությունից: Այսինքն՝ քանակապես իշխող դասին բնորոշ է առավելագույն կենսունակություն, և միաժամանակ նրա կառուցվածքային հատկանիշները համապատասխանում են համակարգի հիմնական միտումներին:

Վուրցելի այս տեսակետները հիմք են հանդիսանում ողջ բնական ձևաբանության համար: Վուրցելի տեսությունը լրացնում է Դրեսլերի տեսությանը: Իհարկե, նրանց միջև կան տարածայնություններ: Այսպես, Դրեսլերը նշում է հաշվի առնված ընդհանրությունների անբավարարությունը, անդրադառնում ընդհանրությունների միջև դիտվող բախումներին, ինչը Վուրցելը ձգտում է անտեսել: Այդ բախումների լուծումները ներկայացվում են լեզվական տարբեր տիպերի ձևով, ուստի և Դրեսլերը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է բնական ձևաբանության մեջ մտցնել նաև տիպաբանական մի մակարդակ, ինչը բացակայում է Վուրցելի կաղապարում: Նրա կաղապարում համակարգի նորմալ վիճակի բնորոշման շատ չափանիշներ հիմնավորապես տիպաբանական են, և նրա տեսության

մեջ զգացվում է այդ մասի անհրաժեշտությունը: Փաստորեն միայն Վուրցելի կաղապարի վրա հիմնվելով մենք չենք կարող կատարել կարևոր տիպաբանական ընդհանրացումներ:

Վերոհիշյալ երեք բնական կաղապարներից թերևս Դրեսլերի կաղապարն է, որ ունի շատ ընդհանուր հավակնություններ. այն համախմբում է ամենակոնկրետն ու ամենավերացականը, լեզվականն ու արտալեզվականը: Վուրցելի և Մայերթալերի կաղապարներից այն հատկապես տարբերվում է մեթոդաբանության մեջ տիպաբանության ներգրավմամբ: Այդուհանդերձ նրանք երեքն էլ փոխադարձաբար լրացնում են միմյանց՝ տալով ընդհանուր պատկերացում բնական ձևաբանական կաղապարի և առհասարակ բնական տեսության հիմնադրույթների վերաբերյալ: